կատարեցաւ։ | Արսլոս ի Կեսարիայ կատարեցաւ։ Տամու ի Սիկիլիա 5.
Հրով կատարեցաւ։ Տիմոթ յԵփեսոս մեռաւ։ Մարկոս աւետարանիչն 6. 7.
յԱղեքսանդրիայ կատարեցաւ սրով ի Խորոմսէ։ | Եփրեմիոս ի Այշաւ 8.
կատարեցաւ։ Նիկիտոս ի Տիբերիայ սղոցեցաւ։ Բոզոս և Պինոս ի 9.
յԱքայիայ սպանվան։ | Յոհաննէս և Թէոդու ի Բալքա գաղանաց արկան։ 10.
| Ստեփանոս յԵրուսաղէմ քարկոծեցաւ։ Նիկիէս սպանաւ յեկեղեցին 11. 12.
ի Խիսոնայ։ Մարտէլոս ի Պալնամոտոս կատարեցաւ։ | Իասաւն ի 13.
Պամփիսկա Զաքարիայ այրւոյն որդի քարկոծեցաւ ի Ճուրինայ. և այլ 14.
Զաքարիայ ընդ նմա։ Եւ բ. Զակքէ | յանապատն կատարեցաւ։ Ուլումպոս 15.
և Ստեփանէ և Ստուփի ի Տաբարիա ի բանդի մեռան։ Եպենտիայ ի 16.
Պանկրիայ այրեցաւ ի դատաւորէն։ Թէոկրիտոս ի Պէլիսորեկրախա կատա- 17. 18.
րեցաւ։ Անանիայ և Միմէոն ի Բիւզանդիա | սրով կատարեցան յեպարքոսէն։ 19.
| Այսոքիկ Թիւք պատուեալք, յորովայնէ ընդրեալք | և յառաջ քան 20. 21.
զլինելն աշխարհի նկատեալք կազմեցան, բազկաւք Բանին և եղան հիմունք 22.
եկեղեցոյ, և սոքաւք սկսաւ հաւատն, որ է կաթողիկէ եկեղեցի և բնակարան 23.
փառացն Տեառն, խաւսուն աստեղաւք բացափայլեալ ի փառս երկնաւոր 24.
փեսային։ | Եւ է տաւն հբ առաքելոցն յամսեանն հոկտեմբերի բ և յապրիլի 25.
| ի. թ ի փառս Քրիստոսի. և նմա փառք յաւիտեան։ 26.

XXVII.

(Vgl. Einl. Nr. 35).

Յաղագս ԲԵ այս յառաքելոցն անուանեցեալ էին և կամ այս ոչ։ 274a 1.

Պետրոս և անուն կնոջ իւրոյ Պուզիա, և որդիք Յովեդ և Յովնան | 2. 3.
և դուստր մի Սոփիա։ Յակոբոս և Յոհաննէս կոյսք։ | Անդրէաս և 4.
անուն կնոջ նորա Անատաւլի և դուստր մի Մաքրիւ։ Պաւղոս և անուն 5.
կնոջ նորա Մարիզուն և որդիք նորա Սաւուղ և Եւտիքիկոս։ Փիլիպպոս 6.
և անուն կնոջ նորա Թեոքկտի և որդի նորա Թեոփիլէ։ Թովմաս կոյս 7.
էր։ Բարթողիմէոս և կին նորա Թէովդոսիա և որդի նորա Բարտէմիոս։ 8.
| Մատթէոս և կին նորա Կոստիանէ և որդի մի Մատաթիա։ | Յակովբոս 9. 10.
կոյս էր։ Սիմոն և կին նորա Մարի և որդի մի | Ասերգի։ Յուդա Յա- 11.
կովբեան և կին նորա Թէովպիսոն և | որդի մի Կալիստրատոս։ 12.

XXVIII.

(Vgl. Einl. Nr. 36).

274a 13. Յաղագս աւետարանացն գրութեան :

14. Մատթէոս, աւետարանիչ ի կողմանէ փրկչին, երթեալ զհետ Քրի-
15. ստոսի, | ականատես եղեալ սքանչելեացն Տեառն և վարդապետութեանն,
16. յետ ութն | ամի համբառնալոյ Տեառն մերոյ և փրկչի գրէ զաւետարանն
17. յԱնտի|ոք քաղաքի, հեբրայեցի բարբառով, որ բաւանդակեալ ունի
18. յինքն|եան թիւս ԾԴԷ և աւետարանս գլխաւորս կզ, տունս սռ :
19. 20. | Մարկոս աւետարանիչ աշակերտ Պետրոսի առաքելոյ. հրամանաւ նորա
21. գրեաց զաւետարանն յԱղեքսանդրիա քաղաքի, յետ եժան | ամի վերանալոյ
22. փրկչին[1]) մերոյ, և գրեաց եբրայեցի բարբառով, | որ բաւանդակէ յինքեան
23. թիւս մլբ, աւետարանս գլխաւորս ծբ |, տունս ռռ :
24. Ղուկաս աւետարանիչ աշակերտեալ Պաւղոսի | առաքելոյ ի Հռոմ
25. քաղաքի, յետ ի ամի համբառնալ ոյՏեառն յերկինս, գրեաց զաւետարանն
26. հռովմայեցւոց բարբառով, որ բաւանդակէ յինքեան թիւս յխբ, աւետարանս
27. գլխաւորս հբ, տունս սպ :

274b 1. Յոհաննէս աւետարանիչ ականատես եղեալ սքանչելեաց փրկչին և
2. վարդապետութեան, յետ ծբ ամի վերանալոյ | փրկչին մերոյ, գրեաց
3. զաւետարանն յԵփեսոս քաղաքի յունական բարբառով, որ բաւանդակէ
4. յինքեան թիւս մլբ, աւետարանս գլխաւորս այ :

XXIX.

(Vgl. Einl. Nr. 37).

274b 5. 6. Արքեպիսկոպոսութեան ցուցմանց առաջնորդութեանց ցուցակք : | Եթէ ով ոք կամ
7. յորում ժամանակաց հայրապետացն էն որպէս զկարգս առաջնորդութեանց ցուցակք, և
8. 9. Եթէ ով ոք եկեր | ի Հայաստան աշխարհս և որոց հրամանաւ կամ կարգաւ փոխեցին :

10. Երանելոյն Մովսէսի Խորենացոյ թարգմանչի, որ է | գրիչ սրբոյն
11. Սահակա հայրապետին Հայոց, որդւոյ սրբոյն Ներսեսի : Յետ ԾԺա ամի
12. սրբոյն Գրիգորի եղև սկիզբն թարգմանութեան ի հայերէն լեզուս. յերկրորդ
13 ամի թագաւորութեանն | Վռամշապհոյ առաքէ սուրբն Սահակ ի Նանձիանձու
14. 15. քաղաքն | և ետ բերել զսերմնաւրհնէրգ զկալի և զհնձանի, զոր արարեալ
16. էր ի Ե ամի հայրապետութեան իւրոյ սրբոյն Գրիգորի աստուածաբանի :
17. Իսկ կանոն ջրաւրհնէիցն սրբոյն Բարսղի է արարեալ եպիսկոպոսապետին
18. Կեսարու Կապադովկեցւոց, | յ Է ամի հայրապետութեան իւրոյ յԵրուսաղէմ.
19. զի անդ հանդիպեցաւ | և Խորով թարգմանիչն իբեր ի Հայս, որ երթեալ
20 21. էր յԵրուսաղէմ հրամանաւ սրբոյն Սահակա : Իսկ զապաշխարողն կարգեալ
22. և դարձեալ ի մեծի հինգշաբաթոջն արձակեալ սրբոյն | Կիւրղի է արարեալ

---

[1]) Die Hschr. hat փրկիչն.

ի ա̅ ամի Հայրապետութեան իւրոյ ի դուռն | սրբոյն Սիոնի յաւուր, յորում 23.
ընծայեցուցանէր զԵդովմայեցին յԱստուած. և Արջեան և Կորիւն 24.
Թարգմանիչքն բերին ի Հայս։ | Իսկ զկարգս մայր աւրհնէիցն սրբոյն 25.
Կիպրիանոսի է արարեալ, որ և զՅուստինէ սուրբ կոյս մայր արար 26.
կանանց հաւատաւորաց։ Իսկ զասնագապս առնելոյ, որ հոգէհանգիստ ասի, 27.
և | վասն քահանայաթաղից, որ է ժ̅ը աւետարան, զոր արարեալ է երանելոյն 275a 1. 2.
Եփրեմի Խորին Ասորոյ ի Սիկոմիտացւոց քաղաքին յը ամի Հայրապետութեան 3.
իւրոյ. և Ղազար Թարգմանիչն եբեր ի Հայս ի ժ̅գ ամի | Թարգմանու- 4.
թեան սրբոյն Սահակայ Պարթևի առն Աստուծոյ, որ էր նախանձախնդիր 5.
կարգաց եկեղեցւոյ, որ և ժ̅ թիւ էր ի սրբոյն Գրիգորէ, որ էր յետ | 6.
ճժա ամի անցանելոյ, յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցան
հրամանաւ սրբոյն Սահակայ, ձեռամբ խմով Մովսէսի գրչի Սահակայ | 7. 8.
Պարթևի ի փառս Աստուծոյ։ Իսկ վասն Տեառնականի և աղօրհնէիցն
սրբոյն Յովսեփի է արարեալ, որ չորրորդ եպիսկոպոս էր Երուսաղէմի 9.
յառաքելոյն Յակոբայ։ | Ի յերկրորդ ամին (dann in ամէն geändert) սրբոյն 10.
Սահակայ մինչև ի ժ̅գ ամն նորա կատարեցան ի | փառս Աստուծոյ։ Իսկ 11.
զաքեմարկեստ Թէոդորոսի եպիսկոպոսի Միդաւրէ Պանիփիւլացւոց քաղաքին 12.
արարեալ է ի ա̅ ամի իւրոյ հրամանաւ մեծին Անտոնի և ք. Թերայեցւոցն 13.
սուրբ հօրն Անտոնի և գ̅ Սկիւթացւոց լերինն։ Իսկ վասն գրակարգացի 14.
և նկարելոյ եկեղեցւոյ, յետոյ օրհնութիւն և դուռն յետոյ դնելոյ և վասն 15.
որ զնշխարսն ի հանգիստ փոխեն՝ այս | ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն 16.
Գրիգորէ մերոյ լուսաւորչէն։ Իսկ վասն | քահանայօրհնէիցն սրբոյն 17.
Սահակայ է արարեալ յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրում. ի Նաւ- 18.
ւասարդի ամսոյ, որ օր մի էր և յիշատակ սրբոյ | Կարապետին, արար 19.
զքահանայօրհնէքդ և զքահանայթաղէքդ, որ | ունի է̅ աւետարան, և 20.
զաշխարհականի թաղումնդ ի յԱյրարատ գաւառի, ի Վաղարշապատ 21.
քաղաքի, ի վկայարանի սրբոյն Հռիփսիմէի, յետ | ճժա ամի սրբոյն 22.
Գրիգորի, զի մինչև ցայն հնումն վարէին. արար սա | և զգիշերոյն քարոզսն 23.
և զնոցունց զչորս աղօթսն, որ են այսոքիկ. Վասն | ի վերուստ, Վասն ի 24.
գիշերի, Վասն ուղղելոյ, Վասն գտանելոյ, առաջին կանոնին աղօթք՝ Տէր տու- 25.
ընջեան, փոխն՝ Օրեզ որ յամենայնի, երկրորդին՝ ի գիշերի և ի տու[նջեան]. 26.
փոխ՝ հովիւ քաջ, երրորդին՝ Տէր երկինի և երկրի, փոխ՝ | Քրում ամենազօր, 27.
չորրորդին՝ Գոհանամք, փոխ՝ Կենդանարար զօրու[թիւն]։ | Իսկ վասն հիմնար- 28.
կութեան սրբոյ տաճարիդ, ժամահար օրհնելոյ, սկիհ և | մաղզմայ և գիրք և 29.
կնունք առնելոյ և խաչ օրհնելոյ և պսակ օրհնելոյ և զքառասնորդացն գ ժամե- 275b 1.
րոյն քարոզն և զաղօթսն Յովհաննու Մանդակունոյնէ արարեալ, որ չորեք- 2.
տասնեան թիւ էր ի սրբոյն | Գրիգորէ։ Այսքան է, եղբայր գիտնական. յորժամ 3.
կամիցիս քերել ցուցակ զՄաշտոցին, զ.քերեալդ նախ գծեսցես։ Եւ 4.
Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է | օրհնեալ յաւետեանս. Ամէն։ 5.

(Nonnos.)

Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz.

Herausgegeben

von

Agop Manandian.

Die mythologischen Erklärungen zu vier Reden des Gregor von Nazianz werden bekanntlich einem gewissen Abte Nonnos zugeschrieben. Sie sollen zu Anfang des VI. Jahrhunderts entstanden sein. (Vergl. Edwin Patzig, De nonnianis in IV. orationes Gregorii Nazianzeni commentariis. Leipzig. 1890; K. Krumbacher. Gesch. der byzan. Lit. Zw. Aufl. 1897, p. 137 und 680).

Diese Scholien besitzen wir in einer altarmenischen Uebersetzung, nicht aber zu vier, wie im Griechischen, sondern zu fünf Reden: 1. Ueber die Epiphanie des Herrn, 2. Ueber Basilius von Caesarea, 3 u. 4 An den König Julian (die zwei Strafreden), 5. Auf den Bischof und Märtyrer Cyprianus.

Der altarmenische Text von Nonnos war bis jetzt noch nicht ediert. In der Bibliothek der alten armenischen Uebersetzungen von Pt. G. Zarbanalian, Venedig, 1889 (neuarmenisch) S. 634 folg. sind zwei Venezianer Handschriften der Scholien erwähnt, von welchen die ältere aus dem Jahre *ոծէ* (= 1208) stammt. Auf ein handschriftliches Sammelwerk der Ejmiaciner Bibliothek mit den Scholien (aus dem Jahre 1223) hat mich Galust Ter-Mkrtschian aufmerksam gemacht (Hdschr. N. 2093 = *Մ՝այր ցուցակ* Nr. 2050). Bald darauf wurde von mir in dem Ejmiaciner Sammelwerk N. 1775 (*Մ՝այր ցուցակ* N. 1733) ganz zufällig noch eine zweite Handschrift von Nonnos entdeckt, die an Korrektheit des Textes alle bekannten übertrifft. Dieselbe ist in alter Transitions-Rundschrift geschrieben, so dass ich die Zeit ihrer Abfassung ungefähr ins XIII. Jahrhundert setze.

In dem Ejmiaciner *Մ՝այր ցուցակ* (Karenian, erschienen 1863 in Tiflis) enthält das aus Versehen als ‚laconische Geschichte‘ angeführte

Werk[1]) dreissig Kapitel (ա̅—լ̅) ‚mythologischer Geschichten‘, welche aus verschiedenen Teilen der Scholien von einem unbekannten Schreiber *Hovsēp‘* zusammengestellt sind (Hschr. N. 1808 = Մ՝այր ցուցակ N. 1765, aus dem Jahre ռճլթ = 1690). Ausserdem liegt uns eine zusammenfassende Kompilation der Scholien, wie P. J. Daschian richtig vermutet hat, im „Liber Causarum“ vor (Vgl. P. J. Daschian. Cat. der arm. Hschr. in der Mech.-Bibl. zu Wien, 1895 S. 225—229).

Für unsre Ausgabe haben wir den ausführlichen Text der zwei genannten Ejmiaciner Handschriften benutzt und bei unverständlichen Stellen auch die Auszüge des Hovsēp‘ und „Liber Causarum“ möglichst berücksichtigt.

Ueber den Autor der Scholien giebt uns der Schreiber Hovsēp‘ in der Nachschrift zu den Auszügen ein Zeugnis, und zwar nennt er als Verfasser den armenischen Philosophen David Anhałt‘: *«Զ՝այս քանի մի առաջնոց հեթանոսաց առասպելական պատմութ̅է, զոր արարեալ է Դաւիթ յանյաղթ փիլիսոփայի և ես պիտ՛՛կ և վրիպակ յովսէփս զպիտանացուն ընտրեցի և ծրեալ եդի ի վերջ գրգիս...»* (N. 1808 = Մ՝այր ցուցակ N. 1765, Bl. 340b). Die Hschr. N. 1775, die ausser Nonnos (Bl. 2a—Bl. 108a) noch Bruchstücke aus Hesychius Miles. (Urgeschichte Konstantinopels, Bl. 108b - 117b), aus Eusebius von Caes. (Bl. 117b bis 127a) und dem „Liber Causarum“ enthält, weist eine Nachschrift auf, die sich wahrscheinlich auf den wesentlichen Teil des Sammelwerks, die Scholien, bezieht und gleichfalls David Anhałt‘ für den Verfasser der „Mythologie der auswärtigen Philosophen“ erklärt. Diese später von einer anderen Hand geschriebene Nachschrift lautet so: *«Գ՝իրքս իմաստասիրաց արտաքնոց առասպելաբանութ̅ե արարեալ Դաւթի անյաղթ փիլիսոփայի»* (N. 1775, Bl. 150b). Dem armenischen Philosophen David Anhałt‘ sind auch sonst einige Schriften zugeschrieben, die keineswegs von ihm herrühren. Die Feststellung des Verfassers und der Zeit der Uebersetzung erfordert noch eine eingehende kritische Untersuchung.

---

1) N. 1765, S. 194 *«պատմութիւն լակոնացւոց արարեալ ի Դաւիթ փիլիսոփայէ և համառօտեալ ի Յովսէփայ ումեմնէ, ունի յիշատակարան»։* Diese falsche Angabe ist dann von P. G. Zarbanalian benutzt worden (Bibl. d. a. arm. Uebers., S. 756).

Ծանօթութիւնների մէջ գործածուած կրճատումների.

A. = Ձեռ. N. 1775 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 1733).

B. = Ձեռ. N. 2093 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 2050).

A լուս. = A ձեռ. լուսանցքի ծանօթութիւնները. (գրիչը և թանաքը չեն տարբերւում բնագրի գրչից և թանաքից).

B. մի ն. գ. = B ձեռագրում մի նոր գրչի սրբագրութիւնները.

Զարբ. = Զարբհանալեան. Հ. Գ. Մատենադարան Հայկ. Թարգման. Վենետիկ, 1889.

Պատճ. գիրք. = Ձեռ. N. 1650 Էջմ. մատ. (Մայր ցուցակ, N. 1608).

(«է»-երի և «ե»-երի գրութիւնը երկու ձեռագրի մէջ էլ երբեմն անորոշ էր. ծանօթութեանց մէջ սոցա տարբերութիւնները նշանակած չենք. իսկ բնագրում հետևել ենք սովորական հին ուղղագրութեանը)։

I.

ԺՈՂՈՎԱՐԱՆՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ ԱՑՆՈՑԻԿ, ԶՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ Ի ՃԱՌԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։

Ա. Արամազդայ պատմէին ծնունդս և փոխանակս Կրետացւոց բանաստեղծքն...

Զ Արամազդ աստուածաբանքն հեղղենացւոց ի Կրոնոսէ ասեն ծնեալ, և ծնանելով կեցեալ այսպէս Կրոնոս ընդ Հռէի ամուսնացեալ և նորին եղեալ բնակակից, զմանկունսն զորս ծնանէր, առեալ սա կլանէր, և այսպէս բազում անգամ այսմ իրի լինելով՝ անզաւակ մնացեալ լինէր Հռէ։ Արդ՝ յորժամ զԱրամազդ ծնաւ, երկուցեալ, թէ գուցէ և զայս կլանիցէ և կորուսցէ, վէմ պատեալ ի խանձարուրս, իբր թէ տղայ, ետ ցԿրոնոս զի կլանիցէ, և զԱրամազդ արտաքրեալ՝ պահեաց ի Կրետէ և կարգեաց առ տղային զկորիւբանտսն և զկուրետսն՝ կաքաւել և զինուք թնդիւնս առնել, զի լինիցին հնչմունք այսպիսիք հնարաւորք, մինչ և գողանալ և մոլորեցուցանել զձայն լալոյ մանկանն, զի մի գիտասցէ Կրոնոս զթաքուստ մանկանն և առեալ կլանիցէ զնա։ Արդ՝ այժմիկ հայր ասէ

---

1) B. պատմութեց. 2) B. զոր. 2) A. ի ճառի. 4) AB. Արամազդա. 5) B. հելլենացւոց. 5) B. կրաւնոսէ. 6) B կրաւնոս [յուն. Κρόνος.] 10) B. տղա. 11) B. ցկրաւնոս. 12) B. առ տղայիւն. 12) B. զկորեւբանտն. 12) A. կաքաւեալ. 13) B. թնդիւն. 14) B. մանգանն. 14) B. կրաւնոս. 15) B. այժմ.

վարդապետս որդխառեաց զԿրոնոս և մանուկ լացեալ զԱրամազդ. և կուրետս և կորիւբանտս, զորս կարգեաց Հռէ կաքաւել առ մանկամբն, դևք ոմանք են, և զինուք կաքաւումն զաղավերջն (?) ասէ, քանզի թնդմունս առնէին բախելով զասպարսն, զի ծածկիցի լալիւն մանկանն. Իսկ կրետացւոց բռնաւորին ասաց, քանզի առասպելաբանքն եղլենացւոց աստուած ասեն եղեալ զԱրամազդ, այլ Հանդիսական պատմութիւնն, զոր և ստուգէ աստուածայինն Գրիգորիոս, ասէ, թէ Արամազդս բռնաւոր էր կրետացւոց, և կամելով Հաճել զնա Հպատակքն իւր՝ առասպելաբանէին թէ ի Կրոնոսէ և Ռէէ ունի զլինելութիւն, սակայն մարդ էր, վասն որոյ և ի վերայ Հասեալ լինի. թէպէտ և եղլենացւոց Հաճոյ ոչ թուիցի, քանզի եղլենացիքն ոչ կամին զԱրամազդ մարդ գոլ ասել և բռնաւոր կրետացւոց, այլ աստուած:

Բ.

Բ. Ոչ փռիւգացւոց Հարուածք և փող և Կորիբանտք . . . Այս պատմութիւն կայ և յարձանականսն և է այսպէս. ի փռիւգիա պաշտեալ եղև մայր աստուածոցն Արամազդայ, Պոսիդոնի, Պղուտոնի և Հերայ. արդ մայր աստուածոցս այսոցիկ էր, այլ Կրոնոսի կին էր: Սմա ի փռիւգիայ լինէին ձաւնմունք, և կատարողքն սոցունց, իբր աւիշեալք Հեշտութեամբ՝ զմարմինս իւրեանց յաւշէին սրով, ի ձեռն փողոյ Հրճուեցուցանելով զինքեանս և յարուցանելով կայտառագոյն ի Հարուածսն: Իսկ մինչև ցարդ եղլենացիք, առ լեռնակողմանս կարիացւոց, անզգամք ոմանք աղճատեալք Հատանեն զինքեանս, Նախնի սովորութեամբն ըմբռնեալք:

Գ.

Գ. Եւ ոչ Աղջիկ ոք ձեղ յափշտակեալ լինի . . . և այս պատմութիւն գրեալ կայ յարձանականսն, և է այսպէս. Դեմետեր, աստուած գոլով ծնաւ

---

1) B. զկրաւնոս. 2) B. կուրիբանդս, [յուն. Κορύβαντες, Κουρῆτες]. 2) A. ռե. 2) B. առ մանգանն. 4) B. ծածկեսցի. 4) B. կրետացոց. 5) A. առասպելապանքն. 5) B. ելլացւոց. 6) B. ստուգէին. 7) B. ա͞ծային Գրիգորիոս. 7) B. արամազդ. 7) B. կրետացւոցն. 8) B. ի կրաւնոսէ. 9) B. յռէէ, [յուն. Ῥέα.]. 9) B. զլինելութին. 9) B. ի վերա. 10) A. լուսանցքում գրած ունի «ծանուցեալ», B. ծանուցեալ Հասեալ. 10) B. ելլենացւոցն. 10) B. ելլենացիք. 13) B. փռիւգեցւոց. 13) B. կորիւտքն. 14) B. կա յարձանականսն. 14) B. այսպիսի. 14) B. (ի) փռիւգիեայ. 15) A. արամազդա. 15) B. պիսիդոնի, [յուն. Ποσειδῶν.]. 15) AB. պղատոնի, [յուն. Πλούτων]. Պղուտոնի մեր ուղղածն է. 15) B. Հերեայ. 16) A. այդ. 16) B. կրաւնոսի. 16) B. փռիւգիա. 17) B. լինի. 17) B. ալփեալք. 20) B. ելլենացիք. 20) B. ի առ լեառնակողմամբքն. 23) Աղջիկ յատուկ անուն. [յուն. Κόρη]. 24) A. կա, B. կայ:

դուստր յԱրամազդայ, զոր կոչէին Աղջիկ և Պերսեփոնէ. սմա տուփեալ Պղուտոն յափշտակեաց և էջ ի դժոխս: Արդ Դեմետեր շրջելով խնդրէր զԱղջիկն, և բաղում յածեալ եկն յԱտտիկէ. իսկ զտեղին, յոր եկն կոչեաց Եղևսինէ, որ նշանակէ զգալն անդանաւր. այլ ուսաւ առ ի Կեղէոսէ և ի Տրիպտողոմէոսէ, թէ Աղջիկն յափշտակեալ առ ի Պղուտովնոսէ, և է ի դժոխս: Արդ իմացեալ զայս աստուածուհին դադարեաց ի յածմանէն, և փոխարինելով զարսն յաղագս շնորհիս այսորիկ ետ նոցա սերմանիս ցորենոյ և գարւոյ և այլոց հնդից, քանզի ասի սերմանական պտղոց գոլ վերատեսուչ Դեմետեր: Այլ տուեալ զսերմանիսն ետ և վիշապս և կառս թևաւորս առ ի շրջել և բաշխել ամենեցուն զցորեանն և զգարին, զի ոչ ևս գիտէին մարդիկ ուտել հաց կամ վարել ցորենով, այլ ճարակական կենցաղով կէին. սակայն ոչ միայն զցորեանն, այլ և զամենայն սերմանական պտուղսն ետ, և զմիստերիոնս կատարեաց և ուսոյց նոցա, թէ որպէս պարտ է կատարել և կատարեալ լինել. այլ գիշերի եղև կատարելութիւնն յԵղևսինէ, զի և տաճար անդանաւր շինեցաւ նորին Դեմետրեայ: Եւ այլ ասէ այսպէս վարդապետն, թէ զոմանս առնէր բարիոք և զոմանս կրէր, վասն զի Դեմետր կրեաց բարւոք, լուեալ յաղագս դստերն և դադարեալ ի յածմանէն: Եւ ինքն բարի առնէր կրելեացն վասն տալոյն զսերմանիսն և կատարելոյն զմիստերիոնսն. այլ ասէ լռելեայն և լռելի գոլ արժանաւորացն, վասն զի օրէն էր, որ հրամայէրն ոչ և մի ինչ ումեք ի կատարելոցն և յորոց կատարեալքն լինէին զխորհուրդսն հրապարակել զկատարելութեանն, այլ լռութեամբ ունել և ոչինչ արտայայտել անխորհրդիցն:

Դ.

Դ. Ոչ Դիոնիսոսի ազդրատեցէ և անդ ամ երկանցն անկատար ծնունդ... Սեմեղի դուստր էր Կադմոսի Թեբացւոց արքային. սմա տուփեալ Արամազդայ շաղաշարեցաւ ընդ նմա և ի նախանձ շարժեաց զՀերա զկինն իւր, և

1) B. արամազդ. 2) B. պղատոն. 2—3) A. շրջ խնդրելով. 4) A. այղ. 5) A. առ ի կեղեղոսէ. 5) B. ի տրոպտողմիոսէ. ճիշտը պիտի լինիր ի Տրիպտողեմոսէ [Τριπτόλεμος.] 6) B. պղատոնոսէ. 7) B. (ի) յածմանէն. 8) B. սերմանս. 8) B. (և) գարոյ. 9) B. վերատեսուչ Դեմետր գոլ. 9) A. այլ տեսեալ. 10) A. (և) վիշապս. 10) B. ամենիցուն. 11) A. (ևս) չիք. 11) A. վարիլ. B. վարել. 12) B. զցորենն. 13) B. պտուղ. 13) B. զմիստոոնսն. 16) B. դիմետրեայ. 16) B. (եւ) չիք. 17) B. բարիոք. 19) B. զմեստրիոնն. 19) A. լռելեացն. B. լռելեան. 20) AB. հրամաերն. 21) B. (ումեք) չիք. 21) A. կատարեաքն. B. կատարեալքն. 22) A. զկատարելութի. B. զկատարելութեանն. 22) B. և ոչ. 25) B. դիոնոսիոսի. [յուն. Διόνυσος, Διώνυσος]. 26) B. սեմելի. [յուն. Σεμέλη]. 26) A. թեբէացւոյ. 26) B. արքաին. 26) A. սմայ. 26) B. արամազդ. 27) A. նմայ. 27) A. զհերայ. 27) B. զկին.

Նախանձայոյզ լեալ Հերայ երթայ առ Սեմեղի և ասէ ցնա թէ «Պատրեալ լինիս ամենևին, քանզի, որ մերձենայ առ քեզ՝ Զևս ոչ է. քանզի առ իս գալով՝ հանդերձ փայլատակմամբք և որոտմամբք շաղաշարեալ լինի: Արդ՝ եթէ եկեսցէ առ քեզ Զևսն՝ ասա՛ ցնա, թէ որպէս ընդ Հերայ շաղաշարիս՝ այնպէս եկ առ իս, և եթէ մերձենայ առ քեզ փայլատակմամբք և որոտմամբ՝ ճշմարտապէս Զևս մտանէ առ քեզ, ապա թէ այլպէս՝ Զևս ոչ է»: Զայսոսիկ այսպէս ենթադրելով Հերայ, յորժամ եկն Զևս առ Սեմեղէ հայցէ առ ի նմանէ շաղաշարիլ ընդ նմա որպէս ընդ Հերայ:

Եւ մերձեցեալ որոտմամբ, ոչ հանդուրժեալ Սեմեղեայ բռնութեանն որոտմանցն մահացաւ: Արդ՝ Զևսն վաղվաղակի զմանուկն, որ էր առ նմա, առեալ՝ եհերձ զբարձն իւր և եդ ի ներքս, մինչև լինիցի ամսոց ինունց: Եւ էր նա Դիոնեւսոս: Արդ՝ անկատար ծնունդ ասէ զմանուկն, որ արկաւ ի բարձսն, և բարձն երկնեալ ասէ, զի ծնաւ ի բարձիցն Արամազդայ, և աստուած այրակին անուանէ զԴիոնեւսոս, իբրու երբեմն զկանանց կրեալ և երբեմն զարանց գործեալ. և պար արբեցելոցն ասէ զսատիրոսսն և զբաքոսսն և զսիղենոսսն, որք են դևք հետևողք և ուղեկիցք Դիոնեւսեայ. զնոյնս և զատս լքեալս ասէ այս ինքն դևս. այլ լքեալս կոչէ զնոսա վասն արբեցութեան, քանզի գինոյ արարիչ զԴիոնիսոս ասեն վայելչապէս և զհետևեալսն նմա արբեցեալս ի ներքս մուծանեն. այլ թեբէացւոցն անմտութիւն զսա պատուելով ասացեալ է, զի թեբէացի էր ազգաւ Դիոնեւսոս, իբրու ի Սեմեղեայ ծնեալ. անմտութիւն բարւոք ասաց թեբէացւոցն, քանզի յիմարութեամբ հեգնեալ լինէին թեբէացիքն, վասն որոյ առակ է ասացեալ, թէ ի բիովտացւոց դաշտն նաւ շրջի, այլ հրդեհ երկրպագեալ ընդէ՛ր լինի. ասասցուք, թէ վասն կիզմանն Սեմեղեայ: Եւ իբրու այլ ինչ գլուխ յառաջագոյնն այլ պատմութիւն է, այլ քանզի շարամանեալ եղև ընդ սմին՝ հարկաւոր է մեզ պատմել: Գլուխն Արամազդայ գլուխ ասի

---

1) B. լիեալ. 1) B. երթա. 1) B. սեմելի. 1) A. ցնայ. B. (ցնա). 1) B. պարտեալ. 2) B. մերձենա. 3) B. գոլով. 4) B. ընդ հերա. 5) B. մերձենա. 5) B. փայլատակմամբ. 6) A. ապայ. 7) B. ընթադրելով. 8) B. առ սեմելի. 8) A. նմայ. 9) B. մերձեցաւ. 9) A. սեմեղեա. B սեմելեայ. 9) B. բռնութեան. 10) AB. նմայ. 11) B. լիցի. 11) A. ինսունց. 12) A. դիոնեւոս. B. դիոնեւսիոս. 13) A. և բարձ. 13) B. արամազդա. 14) B. զդիոնոսիոս. 15—16) B. զսատիրոսն և զբաքոսն և զսեղենոսն. [յուն. Σάτυρος, Βάκχος, Σειληνός]. 16) A. ուղղեկիցք. B. ուղղակիցք. 16) B. դիոնեւսիոսի. 17) B. զնոյն և զատ լքեալ ասէ. 18) A. զդիոնեւոս. B. զդիոնիսոս. 18) A. վաելչապէս. 19) A. նմայ. 19) B. այլ թեբացւոցն այլ թեբացւոցն. 20) B. թեբացի. 21) A. ի սեմեղեա. B. ի սեմելէ. 21) B. բարիոք. 21) B թեբացւոցն. 22) B. թեբացիքն. 22) B. յառակ. 23) B. ի բովտացւոց. 23) A. հերդեհ. 24) B. կիզման. 24) A. սեմեղեա. B. սեմելեայ. 25) B. յառաջագոյն. 26) A. սմայ. B. նմա. 26) B. արամազդա. 26) B. ասէ.

Երկնից, որպէս և բարձրն բարձր երկնի, յորժամ եդ ի նմա զԴիոնուսոս: Արդ՝ սասացուք, թէ յորժամ եղև գլուխ նորա երկնի. յորժամ ունէր ի նմա զԱթենա, քանզի ասի թէ Աթենա ի գլխոյն Արամազդայ ծնաւ, վասն զի անդ ունէր զնա յղացեալ, և առեալ ի Հեփեստոսէ տապար՝ եհերձ զգլուխն և ծնաւ զԱթենա:

Ե.

Ե. Ա. Աֆրոդիտեայ պոռնկական խորհուրդն.. Ասի թէ յերկաւորեացն երկնի Աֆրոդիտէս ընկալաւ (?) զլինելութիւնն, զի Կրոնոս ասէ որդի էր երկնի, առեալ գերանդի եհատ զերկաւորիսն հաւր իւրոյ և ընկեց ի ծով. և յայնմանէ հաւաքեալ փրփուր՝ բացածնեալ լինի Աֆրոդիտէս, ուստի և զանունն ընկալաւ, որ է փրփրածին, իբրու թէ ի փրփրոյ և ի յածմանէ ծնեալ. վասն որոյ և ասաց թէ «զարշարար ծնելոյն իսկ և պատուեցելոյն». զի և պատիւքն նորա և տաւնքն ի ձեռն գարշագործութեան և հեշտախտութեան և պոռնկութեան կատարեալ լինէին, և նոյն ինքն Աֆրոդիտէսպոռնկութեան է վերատեսուչ:

Զ.

Զ. Ես ոչ փալլոսս ամաչ և ուղղափալլոսս... Ի տաւնին Դիոնուսոսի փալլոսս մորթեղէնս ձևացուցանէին առն պատկառանաց եղլենացիքն, և զոմանս կախէին ի պարանոցս իւրեանց, և զոմանս ի մէջսն, ի պատիւ աստուծոյն իւրեանց, ուղղապէս կախելով ի նմանութիւն պատկառանաց ուղղորդս առնէին, զորս և ուղղափալլոսս կոչէին, և զմիւսսն կողմնափալլոսս: Եւ զայս առնէին, պատուելով զտաւնն Դիոնիսոսի. քանզի սա, նախ քան զհանդիպելն պակշոտութեամբ, ընկղմեալ ի ծովն Լեռնեայ՝ մեռաւ: Արդ՝ Դիոնուսոս, մխիթարել կամելով զոսփումն պատանեկին, թզենի պատկառանս տաշեալ՝ կախեաց զպարանոցէն, և այսպէս շրջէր. վասն որոյ և զոփոռելով (?) զԴիոնուսոս և եղլենացիքն զփալլոսսն զինքեամբք առնուն:

---

1) A. նմայ. 1) B. զդինոնոսիոս. 2) A. նորայ. 3) A. զաթենայ. 3) A. աթենայ. 3) AB. արամազդա. 5) B. զաթենայ. 7) A. պոռընկական. 7) A. ասէ. 7) B. յերկաւորացն. 8) AB. ընկաւ, Զ արբ. ընկալաւ. 8) B. կրաւնոս. 13) A. նորայ. 14) A. պոռընկութեան. 14) A. պոռընկութեան. 17) B. (ոչ) չիք. 17) A. ուղղփաղոսք. B. ուղափաղղոսք. 17) B. դիոնոսեայ. 18) B. փաղոս. [յուն. φαλλός]. 21) B. ուղորդս. 21) B. ուղափաղոսս. 21) B. զմիւս կողմափաղոսս. 22) B. առնելով պատուէին. 22) A. զտաւղն (?). 22) B. դիոնոսեայ. 22) B. (քան) չիք. 24) B. դիոնոսոս. 24) A. զպատանեկին. B. պատանեկին. 25) A. այնպէս. 25) A. պատուիրելով. B. պատուել. «պատուելով» մեր ուղղածն է. 26) B. զդիոնոսիոս. 26) B. (և) ելլենացիքն. 26) B. փաղղոսս. 26) B. զինքեամբ.

Է.

է. Յաղագս տաւրացւոցն աւտարասպանութեան: Տաւրոս ազգ է սկիւթական, յորում էր տաճար Արտեմիդեայ, յորում տաճարի քահանայուհի էր Իփիգենիա դուստր Ագամեմնոնի թագաւորի: Յայսմ տաճարի զամենայն մարդ եկեալ յաւտարաց զոհէին Արտեմիդեայ: Յաղագս այսր պատմութեան յարձանականսն հաւաստեաւ ասացուք:

Ը.

ը. Պատմութիւն լակոնացւոց մանկահասակացն և որ առ բագնաւքն արեանն: Այս է այսպէս. Ղակեդեմոնացիքն, առ ժուժկալութիւն կրթելով՝ տաւն առնէին, յորում տանջէին զմիմեանս գանիւք փոկոց, և յարիւթիւն այսպէս հրահանգէին. քանզի, եթէ ժուժկալք ստանաւր գտանէին համարէին և առ պատերազմունսն նոյնպիսիս լինել: Այլ պատուէին լակոնացիքն ի տաւնս տանջանաւք այսպիսեաւք զԱրտեմիս, զի զնա ասէ կոյս աստուածուհի, զի ժուժկալ է և գեր ի վերոյ ամենայն զանգիտութեան և ներախտութեան. այլ և զխեննշութիւն ասէ պատուեալ ղակոնացւոցն, քանզի առնէին տաւն ինչ, զոր կոչէին զուգասուաղութիւն, յորում հասարակաբար ամենքեան կերակրէին և խրախացեալք իգանային, և կամ զի անդանաւր ճարակէր մանկամոլութեանն ախտ, որպէս ունիմք յաղագս Պաւսանի և Արգիւղիայի. այլ զյանդգնութիւն պաշտեցին ասէ: Յաղագս ժուժկալութեանն և արութեանն է բանս:

Թ.

թ. Յաղագս Պելոպեայ խոհագործութեանն: Պեղղովպոս ուստր էր Տանտաղեայ: Արդ՝ այսմ Տանտաղոսի եկին հիւրք աստուածքն, և սա կամեցեալ

---

2) B տաւրացն. 3) A. արտեմիդեա. 3) B. քահանայուհին. 4) B. իփիւգինիա. 4) B. ագամենմոնի. 5) B. արտիմիդեայ. 8) A. գրած է «լակոնացւոց», իսկ յետոյ նոյն գրիչը ուղղել է «լակոնացի». 8) B. մակահասակացն. 8) A. բաքնաւքն. 8) B. արիւն. 9) B. ղակեդոմնացիքն. 11) B. ստաւր. 12) A. այղ. 12) A. պատմերին. 13) B. տանջաւք. 13) B. այսպիսիւք. 14) B. զժուժկալ. 15) B. (և ներախտութեան) չիք. A. ներաւստութեան. Պտճ. գիրք. «ներախտութեան». 15) B. լակոնացոցն. 17) A. ամեքեան. B. ամենիքեան. 17) AB. իգանաին. 18) B. անդաւր. 18) B. մանգամոլութեն ախտն. 19) B. պաւսանիաի. 19) A. արգիւղիաի. B. արգիղիաի. 20) B. յարութե. 22) B. Պելոպսի խահագործութե. [յուն. Πέλοψ.] 22) B. Պեղոպոս. 22) B տանտաղա.

հիւրընկալութիւն առնել՝ եղեն զորդի իւր և եփեալ եդ առաջի նոցա։ Արդ՝ աստուածքն սքանչացան միանգամայն, և ողորմեալ Տանտաղոսի և հաւաքեալ զմասունս մարմնոյն՝ շարադրեցին և վերստին կենդանացուցին զՊեղղոպոս։ Իսկ մի ոմն յաստուածոցն յուսոցն կերեալ ի մարմնոյն Պեղղովպոսի, ի շարադրելն զմարմինն, քանզի պակաս էր մասն, փղոսկր ինչ եդեալ առ ուսն՝ լցոյց զպակասութիւն։ Եւ այսպէս Պեղղովպոս վերստին կենդանացեալ՝ զուսն փղոսկրեայ ունէր. և ամենեքեան պեղովպիդեանքն յուսոցն լինէին ծանուցեալք. քանզի ծնեալք ի նմանէ զմասն ուսոյն փղոսկրեայ ունէին։

Ժ.

Ժ. Յաղագս Ասկղեպեայ։ ԶԱսկղատէ աստուածուհի գոլ խորհին եղղենացիք, և ոմանք ասեն զնա գոլ զԱրտեմիս, և ոմանք՝ զլուսինն, և այլք՝ զհնդիկ ոմն աստուածուհի, անտեղի երևմամբք յայտնեալ կարդացողացն առ նա և մանաւանդ այնոցիկ, որք անիծանեն զոմանս։ Ի տեսիլ վիշապագլուխ մարդոյ երևեալ, գերագոյն քան զչափ երկայնութեան մարդոյ, իբր զի ի տեսլենէն միայն զարհուրեալ և սքանչանալ տեսողացն։

ԺԱ.

ԺԱ. Յաղագս Տրովփոնեայ։ Եւ և սա գրեալ ի ճառսն, որ է ընդդէմ Յուլիանոսի։ Տրովփոնոս և Ագամեդէս երկոքին եղբարք էին՝ արուեստիւ դիւթք։ Ի սոցունց առաջինն՝ Տրովփոնիոս սնափառութեամբ զենքն ի խորս ընկեց, զի կարծիցի ի վեր առ աստուածսն յափշտակիլ, և աներևոյթ եղեալ ընդ երկրաւ յայրի ուրեմն։ Իսկ աստուածքն ասէ ողորմելով նմա՝ զտեղին զայն, յորում անշնչացեալն էր՝ արարին դիւթարան. և իջանելով յայրն և ձաւնմունս ոմանս առնելով՝ ելանէին անդուստ ընկալեալք

1) A. նոցայ. 2) B. միայն անգամայն. 3) B. (և) հաւաքեալ. 3) A. վերըստին. 4) B. զպելլոպոս. 4) B. (յուսոցն) չիք. 5) B. պելլոպոսի. 5) B զմարմին. 6) A. ուսսն. B. ուսն. 6) B. փելլոպոս. 7) A. վերըստին. 7) B. կենդացեալ. 7) A. զուսսն. 7) B. ունելով. 7) B. ամենիքեան. 8) B. պիլլիպիդեանքն. 8) B. յուսուցն լինին. 8) A. քանզի ծանէաք. 9) AB. փղոսկրեա. 11) B. զեկատեա. 12) B. ելլենացիքն. 12) A. զնայ. 14) B. ի տեսիլ վիշապագլուխ մարդոյ իբր զի ի տեսլենէն միայն զարհուրեալք զի երևեալ գերագոյն քան զչափ երկայնութեան մարդւոյ մինչ սքանչանալ տեսողացն. 18) B. տրոփոնոսի. [յուն. Τροφώνιος.] 18) B. ի ճառս. 18) B. (է) ընդէմ. 19) B. տրոփոնոս. 20) B. և արեստիւ դևք. 20) B. առաջին. 20) B. տրոփոնոս. 22) B. որումն. 22) B. (ասէ) չիք. 22) A. նմայ. 23) B. անշնչացեալ. 24) A. ձունմունս. B. ձաւնմուն. 24) B. ընկալեալ.

զխնդիրս իւրեանց: Այլ ասի թէ ամենայն որ իջանէր յայրն այնուհետև ոչ ծիծաղէր բնաւ:

ԺԲ.

ժբ. Յաղագս Կաղնոյն Դովդոնեայ: Դովդոնիայ քաղաք էր առ հին ցամաքաւն: Ի նմա էր կաղնի մի, յորում ասի Արամազդայ հովանանալ, և դիւթականութիւն պարգևել կաղնոյն, որպէս զի ի շարժմանէ ոստոցն և տերևոցն յայտնել անյայտիցն և պիտանացուաց նշանակութիւնք:

ԺԳ.

ժգ. Յաղագս Դելփական եռոտանոյն: Դելփէ քաղաք է Փովկիդեայ, և Փովկիդեա գաւառ է յԵլլադա. իսկ առ սոքաւք Դելփիք, և ի նմա էր տաճար Ապողոնի, յորում հարցմունք լինէին: Անդ էր հաստատեալ պղնձի եռոտանին, յորմէ դիւթութիւնք արտաբերեալ լինէին. քանզի էր ի վերայ եռոտանոյն անաւթ ինչ, յորում դևք դիթական (?) խաղային և վազս առնէին, յորժամ Ապողոն զդիւթութիւնսն արտաբերէր: Այս եռոտանի վասն այնպիսի իրի էր, զի զդիւթութիւն երիւք ամանակաւք ստեղծանէր, և ճշմարիտ դիւթութիւն ասէ զանցեալն, զներկայն և զապառնին:

ԺԴ.

ժդ. Յաղագս Կաստաղեան ըմպելոյն: Աղբիւր ելանէ ի մեծն Անտիոք, որոյ վերատեսուչ Ապողոն է: Ի նմա դիւթութիւնք արտաբերեալ լինէին ըստ որպիսութեան ջրոյ արտահոսութենէ: Բանք ոչ ինչ ասացեալ լինէին անտուստ, այլ պարզաբար հնչումն և հողմ ինչ ելանէր ընդ հոսման ջրոյն, առ որս ոմանք կալով և իմանալով զնշանսն զայսպիսիս ասէին զհանդերձեալն:

ԺԵ.

ժե. Յաղագս Մոգացն յաղաղական Նախագիտութեանն: Մոգքն ի ձեռն զենլեացն առնէին զնախագիտութիւնն. քանզի զենլով և բանալով զփորո-

---

1) B. *իջանէ.* 4) B. *կաղոյն դոդոնա.* 4) B. *դոնդոնա.* [*յուն.* Δωδώνη.] 5) B. *որ.* 5) AB. *արամազդա.* 6) B. *պարգևեալ.* 6) B. *շարժմանէ.* 7) A. *տերևոյն.* 7) A. *նշանակութիւք.* 8—23) A. *ժգ և ժդ գլ. համառօտած է այսպէս. «Յաղագս դելփիական եռոտանոյն: Դելփէ քաղաք է փովկիդեայ զայնպիսիս ասէին զհանդերձեալսն:»* 9) B. *քաղաք* (*է*). 12) B. *պղընձի.* 13) B. *վերա.* 13) B. *խաղաին.* 16) B. *զներկաին.* 19) B. *ապոն.* 25) A. *մուգուցն.* B. *մոգոցն.* 25) B. *նախագիտութե.* 26) B. *զենլեաց.*

տին, և տեսանելով զհատուածս անդամոցն զլերդին և զպյլոցն ասէին զոր ինչ պատահելոցն էր։ Այլ մոգքն ազգաւ ի գամրաց են, ուստի և լերդահմայութիւնն լինի․

ԺԶ.

ժզ. Յաղագս Քաղդէացւոց աստեղաբաշխութեան։ Քաղդէացիքն, որոց առաջինն Զորոաստր է և երկրորդն Քսարաթրուստէս և յետ սոցունց Ոստանէս — մակացու եղեալք երկնային շարժութեանն և ասացին, իբրու յորպիսութենէ շարժութեան երկնայնոցն ծննդոցն իւրաց պատահիլ, յորոց ուսեալ եղլենացւոցն զաստեղաբաշխութիւն սկսան ծննդաբանել։

ԺԷ.

ժէ. Յաղագս Թրակացւոց յանձանց։ Ասի Թրակացւոցն լինել սկիզբն ամենայն մարդկան, կրաւնից և հաճութեան աստուծոյ, և տեղետս կատարել, և միւստերիոնս հաստատել, և ի Թրակացւոցն Թրասկէալ անուանեցաւ առ աստուած բարեպաշտութիւնն, զոր մեք կրաւնս անուանեմք։ Այլ յառաջ քան զամենայն Թրակացիս Որփէւս ասի թէ պատմեաց զտեղետսն և զյեղանակս նոցունց, և թէ որոյ աստուծոյ վայելեն տեղետքն։ Զսմանէ ասի ի ձեռն քնարին իւրոյ զանշունչսն հրճուեցուցանել և զվայրենիսն հանդարտացուցանել։

ԺԸ.

ժը. Յաղագս տանջանաց Միթրայ։ Զ Միւթրոսէ այլ և այլ տան կարծիս․ քանզի ոմանք զարեգակն գոլ զնա ասեն և ոմանք՝ զվերատեսուչն հրոյ, և այլք՝ յատուկ ինչ գոլ զաւրութիւն։ Լինէին և Միւթրոսի տեղետք ոմանք և մանաւանդ՝ առ ի քաղդէացւոցն․ քանզի որք սովաւ

---

1) B. տեսանել․ 2) B. մոգքքն․ 3) AB. լերդահմաութին․ 5) B. քաղդէացիք․ 6) B. առաջին․ 6) A. զորոյաստրէն․ 6) A. (է)․ 6) B. քսարաթրատէս․ 6) A. սոցուն․ 7) B. ոստանէս․ 7) AB. երկնաին․ 7) B. շարժութեց․ 8) B. յորպիսութե է շարժութի երկնաին ծննդոցն․ 8) A. ծնընդոցն․ 8) B. պատահել․ 8) B. որոց․ 9) B. ելլենացւոցն․ 9) B. զաստեղաբաշխութին․ 9) A. սկան․ 9) A. ծնընդաբանել․ 11) B. թարակացւոց․ 11) B. սկզբն․ 12) B. տելետս․ 13) B. միւտրիոնն․ 12) B. (ի) թրակացոցն․ 13) B. թրասկալ․ 15) B. զտելետսն․ 15) B. զեղանակս․ 16) B. եթէ․ 16) AB. վաելեն․ 16) B. տելետքն․ 17) B. զանշունչն․ 18) B. հանդարտեցուցանել․ 20) B. մութրոսի․ 20) B. զմութրոսէ․ 21) A. զնայ․ 22) B. լինին․ 22) A. եի միւթրոսի․ B. և մութրոսի․ 23) B. տելետք․ 23) B. քաղդիացւոցն․ 23) B. (որք) չիք․

կատարեալք կամէին լինել՝ ըստ աշտիճանաց տանջանաց կարաւտանային, ի թեթևագոյն տանջանացն սկսեալ՝ ի դժուարագոյնսն կատարէին. յառաջագոյն սովով ճնշեալ զանձինս իբրև աւուրս յիսուն և զայնմ ժուժկալն ի քերանս արկանէին աւուրս երկու, և ապա ի ձեան կացուցանէին աւուրս քսան, և այնպէս ըստ փոքու աճեցուցանելով զտանջանսն, զչարըմբերն որ կատարեալն եղև՝ հասուցանէին այնուհետև ի կատարելագոյն տեղետսն:

ԺԹ.

ժթ. Յաղագս աւշատմանցն Ոսիրեայ: Ոսիրիս առ ի յեգիպտացւոցն աստուած կարծի, և ոմանք ասեն գոլ զնա նման Դիոնիւսոսի և ոմանք՝ այլ զոմն: Արդ՝ զսա առ ի Տիփոնոսէ աւշատեալ ասեն, և յաղագս այսորիկ ասեն սուգ մեծ եղեալ եգիպտացւոցն առ ի յիշատակ անմռոաց աւշատմանն Ոսիրեայ: Այլ որպէս ասեն զԴիոնիւսոս ի տիտանեացն աւշոտեալ՝ այսպէս և զՈսիրիս ի Տիփոնոսէ:

Ի.

ի. Յաղագս Իսիդեայ: Իսիս կարծի Յոհի աղջկանն յափշտակեցելոյ յԱրամազդայ. քանզի Զևս յափշտակեաց զՅով և երկուցեալ ի Հերայ կնոջէ իւրմէ փոխարկեաց զՅով յերինջ, երբեմն սպիտակ առնելով զնա, և երբեմն՝ ծիրանագոյն. և այսպէս զհետ նորա յածեալ լինէր: Եկն արդ Արամազդ յԵգիպտոս՝ յածեալ զհետ Յովայ: Եւ պատուեն եգիպտացիքն զՅով, զոր Իսիս կոչեն, վասն որոյ և ի վերայ գլխոյ պատկերին եղջիւրս արջառոյ նկարեն՝ նշանակեալ զաղջկանն յերինջ փոխաբերութիւն:

---

1) B. (կատարեալք) չիք. 1) AB. կարաւտանաին. 2) A. դժոխագոյնսն. 2) A. կատարեն. 3) A. ճշեալ. 3) B. աւուր. 4) B. ի ձիւն. 5) B. այսպէս. 5) B. ըստ փոքունց. 6) B. կատարեալ լինէր. 6) A. հատուցանէին. 6) B. տեղեասն. 8) B. ոշոտմանց ոսիրա. 8) A. ոսիրեա. 8) A. ոսորիս. [յուն. Ὄσιρις.]. 9) B. զնա նման գոլ Դիոնոսիոսի. 9) A. դիոնւոսի. 10) A. Տւփանոսէ. [յուն. Τυφῶν, Τυφάων.]. 10) B. յաղագ. 11) A. (ասեն)չիք. 12) B. յաւշոտմանն. 12) A. ոսիրեա. 12) B. զդիոնոսիոս. 12) B. ի տիտանանցն. 13) A. ի տւփանոսէ. 15) B. իսիսիդոսի. [յուն. Ἶσις]. 15) B. յուհի. [յուն. Ἰώ.] 15) A. յապշտակեցելոյ. B. յափշտակելոյ. 16) A. առ ի յարամազդա. B. յարամազդա. 16) A. յապշտակեաց. 16) AB. ի հերա. 17) A. ի կնոջէ. 18) A. ծիրանեգոյն. 19) B. (արդ)չիք. 19) AB. յովա. 20) AB. ի վերա. 20) A. «պատկերի նոր». Պատճ. գիրք. «պատկերի նորա». 21) A. նըկարեն. 21) B. նշանակեն զաղջկանն յերինջ փոխաբերութին.

ԻԱ.

իա. Յաղագս Մենդեսացւոց նոխազին։ Եգիպտացի լեզուաւն կոչի նոխազն Մենդէս։ Եւ ոմանք յեգիպտացւոցն պաշտէին զնոխազս, որպէս վերադրեալ ծննդական զաւրութեան. քանզի ասի վարար գոլ կենդանին։ Արդ՝ որք բնակեալ էին առ Մենդեսեայ տեղեաւն զնոխազս ոչ ուտէին, խորշելով ի ծննդական զաւրութենէն։ Պատուէին մեծապէս և զայծարածսն, և էր տաճար Մենդիսի առ եգիպտացիսն, յորում տաճարի կայր պատկեր նոխազարուն, ուղղորդ ունելով զպատկառանսն։

ԻԲ.

իբ. Յաղագս Ապեայ և մարդոյ եզոյ։ Ըստ շրջաբերութեան ժամանակաց ոմանց ծնեալ լինէր եգիպտացւոցն արջառ ինչ, յղացեալ ի նշուղեցն լուսնոյ, կոչեցեալ առ ի նոցանէ Ապիս, որ ունէր նշան ի մազ ոտիցն և ի լեզուն, յորոց նշանաց ծանուցեալ լինէր թէ Ապիս է։ Արդ զծնունդ սորա տաւնեն եգիպտացիքն, իբր զգալուստ աստուծոյ առ նոսա, և դարմանէին զարջառն ի մսուր, խրախութեամբ բազմաւ խրախացուցանելով զաստուածն իւրեանց։

ԻԳ.

իգ. Յաղագս Պեղուսի. Յեղանելն նորա պատուեն զնա, իբրև զաստուած, կարծելով զաճումն ջրոյն աստուծոյ գոլ զաւրութիւն։

ԻԴ.

իդ. Յաղագս շանցն և օձոց։ Քանզի պաշտէին եգիպտացիքն զկրոկոտիղոսս և զաւձս, և զաքիսս, և զայլս ոմանս ի թարմատարացն, և զազգս ոմանս ի ձկանց, յանբանից պատուոյն անձանց իւրեանց անարգանս յարմարելով։

---

2) B. մենդեսացի. 3) B. մենդիս. [յուն. Μένδης.] 3) A. զնոխազ. 3) B. վերագրեալ. 4) A. ծնրնդական. 5) A. առ մենդիսացին. B. առ մենդեսեա. 6) A. ծնրնդական. 6) B. զաւրութենէ. 6) B. զայծարածս. 7) A. առ յեգիպտացիսն. 8) B. ողորդ. 10) AB. ապեա. [յուն. Ἄπις]. 11) B. ի նշուլից. 13) B. յորոց (նշանաց) ծանուցեալ (լինէր). 13) B. զծնունդն. 14) B. իբրև. 14) A. նոսայ. 15) B. (բազմաւ)չիք. 15) B. խրախացուցանէին. 16) B. իւրեանցն. 16—18) B. իգ. գլ. չունի. 19) A տծա գոլ. «աստուծոյ» մեր ուղղածն է. 21) B. ուրիշ վերնագիր ունի. «յաղագ նեղոսի.» 22) B. զկոկորդիլոսս. 23) A. (ի) ձկանց. 23) A. յանբան. 23) B. յանձանց.

II.

ՀԱՒԱՔՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑՆ ԶՈՐՍ ՅԻՇԱՏԱԿԵԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԻ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ.

Հռետորքն և սոփեստէսք արտաքնոցն, զառ ի նոցունց ներբողեալսն կամելով աղնուականագոյնս ցուցանել՝ ասեն թէ սա ազգաւ ի Պեղղովպոսէ է և ի Կեկրովպոսէ, կամ ի Հերակղեայ, կամ յայլոցն առ ի նոցունց կարծեցելոց դիւցազանց, կամ յայլապէս բարի արանցն թուեցելոց դիմեալ գայ: Ասէ արդ աստուածայինն Գրիգորիոս, թէ սրբազունին Բասիլիոսի նախահարքն մեծագոյնք և աղնուականագոյնք էին, քան թէ յարտաքնոցն աղնուականագոյն կարծեցեալքն. իսկ արդ միտք բանին այսպիսի է: Այլ պարտ է ասել, թէ սոքա ոյք ոմանք էին Պեղղովպոս և Կեկրովպոս, և Աղկմէովն, և Հերակղէս, և զինչ ի սոցանէ ծնեալքն: Ի Պեղղովպոսէ պեղղովպեանք ասին, և ի Կեկրովպոսէ՝ Կեկրովպեանք և յԱղկմէոնէ՝ աղկմէովնեանք, և ի Հերակղեայ՝ հերակղեանք, և յԻակոսէ՝ էակեանք:

Ա.

ա. Արդ ասասցուք յառաջագոյն, թէ ո՛ ոք էր Պեղղովպոս: Սա էր որդի Տանտաղոսի փռիւգացւոց թագաւորին, և Տանտաղոս այս մարտ ունելով ընդ Իղոսի, որ շինեաց զԻղիոն, որ ի Տրովադա է, երկուցեալ ի պարտանաց՝ յորդորէ զորդի իւր զՊեղղովպոս, զի առեալ զինչս բազումս գաղթեսցի առ եզերսն՝ ասացեալ այսպէս. «Ոչ է պարտեսցուք յԻւրոպէ ապրեսցուք անդանաւր»: Առեալ արդ ինչս Պեղղովպոս՝ չոգաւ յԵլլադա՝

---

3) B. Հաւաքումն մեկնութեան զորս յիշատակեաց ի գերեզմանական բանի սրբոյն Բարսղի Գրիգոր Աստուածաբան. 4) B. սոփեստէսքն. 4) B. արտաքնոց. 4) B. ներբողեալս. 5) B. աղնուականագոյն. 5) B. ի պեղոպէ. 6) A. ի Հերակղեա. B. ի Հերակղէ. 6) B. յայլոց. 7) B. յայլոց բարի արանց. 8) AB. գա. 8) AB. ա̃ծայինն. 8) B. բարսղի. 10) B. այսպէս. 11) B. պեղոպոս. 12) B. աղմկէոն. 12) A. և զի. 12) B. ծնեալն. 12—13) B. ի պեղոպոսէ պեղոպեանքն ասեն. 13) B. ի կեկրոպոսէ կեկրոպեանքն. 13—14) A. (և յԱղկմէոնէ աղկմէոնեանք) չիք. B. յաղմկէոնէ աղմկէանքն. 14) A. ի Հերակղեա. B. ի Հերակղէ. 14) B. Հերակլեանքն. 14) B. էականքն. 16) B. պեղոպոս. 17) A. թագաւոր և յաղկմեոնն աղկմեոնեանք որին և Տանտաղոսս. 17) B. տանտաղոս (այս). 18) A. շինեց. 18) B. զեղիոն. 19) A. ի պատրանացն. A. լուս. «ի պատրիգեանցն». 19) B. յորդորեաց. 19) B. (իւր) չիք. 19) B. զպեղոպոս. 19) B. ինչս. 20) B. յևրոպէ. 21) B. պեղոպեայ.

ի գաւառն որ կոչի Ապպիա, որ թագաւոր ունէր զՕինոմաոս, որոյ էր դուստր անուանեալն Իպպոդամիա։ Ապա աշխատեալ սաստ Պեղղովպոս յերկվարական մրցմունս ընդ Օինոմաոսի և յաղթեալ նմա առ կին զդուստր նորա զԻպպոդամիա և ըմբռնեաց զգաւառն և փոխանակ Ապպիայի կոչեաց զնա Պեղղովպոնիսոն. այսինքն՝ Պեղղովպոսի կղզի։ Արդ ամենեքեան, որ ի Պեղղովպոսէ ծնեալ են՝ կոչին պեղղովպեանք, որպէս Ատրեւս և Թիէստէս, Ագամեմնոն, Մենեղաոս, և ի կատարածի սոցունց՝ Օրեստէս։ Յաղագս Պեղղովպոսի այսչափ։

Բ.

բ. Իսկ յաղագս Կեկրովպոսի ասել առաջի կայ ահաւասիկ. Կեկրովպոս թագաւոր էր աթենացւոց, որ և մեծապէս զԱտտիկէ զարդարեաց սա։ Երկարնակ կոչեցաւ վասն գոլոյն տեղեակ երկուց ձայնից՝ եղլադացւոյն և եգիպտացւոյն, որ էր ի քաղաքէ Սաիսոյ։ Արդ՝ իշխան բացարնակութեանն գոլով այս Կեկրովպոս և եկեալ յԵղղադա՝ ուսաւ զելլադացի ձայն, ունելով և զեգիպտացին։ Այլ բանն որ ասի, թէ ինքներկրայք են աթենացիքն՝ առասպել է, առեալ զստեղծուածն ոչ երբեք փոփոխելոյն զբնակեալսն յԱտտիկէ. քանզի անաւսրահող գոլով գաւառին՝ ոչ է յոյժ նախանձելի, որպէս զի որ ենն հալածեսցին, և այլք բնակեսցեն ի նմա։ Իսկ և յաղագս Կեկրովպայ ասացեալդ բաւական լիցի։

Գ.

գ. Այլ և Աղկմէոն աթենացի էր ազգաւ նշանաւոր, զաղատութիւնն միշտ պահել կամելով աթենացւոցն։ Արդ՝ բռնադատելով քաղաքին ի Պիսիստրատոսէ՝ անց սա, ոչ հանդուրժեալ տեսանել ընդ ծառայութեամբ

---

1) A. լուս. «ինովմաոս». B. զւնամանոս. [յուն. Οἰνόμαος.]. 2) A. (ապա) ապաշխարեալ (սաստ). 2) B. պելոպոս. 3) A. յիրիւարական. B. յերեվարական. 3) B. եւնամոսի. 3) A. զդուստրն. 4) B. զիպաւդա-միայ. 4) AB. ապիաի. 5) B. պելոպիսոն. 5) B. ամենիքեան. 6) B. պելիպոսե. 6) B. կոչ. 6) B. պելոպեանք. 6) A. ատրեովս. A. լուս. «ատրեւս». B. ատրիովս. 6) A. լուս. «թեիստես». B. թի-ոստեայս [Θυέστης]. 7) A. (մենեղաոս) չիք. 10) B. Կեկրոպոսի. 10) B. (ասել) չիք. 10) AB. կա. 10) A. աւասիկ. 10) B. Կեկրոպոս. 11) B. աթենացւոցն. 12) A. լուս. «երկարոյս». 12—13) B. եգիպտացւոցն և ելլա-դացւոցն. 13) B. սաււոյ. 14) B. բացարնակութե գոլ. 14) B. կեկրո-պոս. 14) B. յելլադա. 14) A. «զելլեդացի զձայնն». «լ» տառի վերև գրուած է «ղ». 15) B. ինքներկայք. 16) B. աթենացիք. 16) B. յառա-սպելն առեալ ստեղծուածն. 18) B. (և այլք բնակեսցեն) չիք. 19) B. (և) չիք. 19) A կեկրովպա. B. կեկրոպա. 19) B. ասացեալ. 21) B. աղկեմոն. 22) B. աթենացւոց. 23) B. հանդուրժելով.

լեալ զԱթենս և եւ հնարիւք, դիտաւորութիւն ունելով զազատութիւնն դարձեալ հաստատել զաթենացւոցն, և գնացեալ ի Դեղփուս յապողոնեան տաճարն՝ վարձէ պանդանդով զտաճարն և վարձեալ ունի ընդ ինքեամբ զամենայն արս և զկանայս պաշտաւնեայս. հաւանեցուցանէ և զքահանաւհին զՊւթիա, զի եթէ եկեսցէ երբեք ղակեդեմոնացի դիւթութիւն խնդրել ոչ ինչ այլ ասել, քան թէ աստուած հրամայէ ձեզ, զի ազատիցէք զԱթենս: Այսորիկ փութապէս և յոլովակի լինելով՝ խիզախեցին ղակեդեմոնացիքն և եկեալ արտաքս հանին զբռնաւորսն յԱթենաց: Արդ մեծ զովասանութիւն յայնմ հետէ ընկալաւ Աղկմէոն, ազատեալ իմաստութեամբ զԱթենս. Եւ այսչափ յաղագս Աղկմէոնին ասացաւ:

Դ.

դ. Արդ Եակոս չորրորդ մեզ ենթակայեալ լինի: Սա որդի գոլ ասի Արամազդայ արդարագոյն յոյժ, վասն որոյ և երբեմն երաշտացեալ գոլով Եղղադայ՝ չոգան առ նա նախարարք քաղաքացն աղաչել զնա աղաւթս առնել առ հայրն իւր Արամազդ, զի լիցի անձրև: Եւ նա լուեալ ըղձացաւ, և լուծեալ ի ձեռն ըղձմանն զտոչորումն՝ ի վայր հոսեաց ջուր և ոռոգեաց զԵղղադա, և առաւել յայսմ ցուցաւ բարեպաշտութիւնն Եակոսի: Սա ծնաւ ուստերս երկու զՊեղղեւս և զՏեղամոն. և Պեղղեւս ծնաւ զԱքիղեւս, իսկ Տեղամոնն զԱյաս, որոյ ծնունդքն կոչին Էակիդեանք զաւ ի հաւրէն իւրեանց այսու զպատիւն յառաջ բերելով:

Ե.

ե. Արդ այսուհետև լիցի մեզ ենթակայեալ Հերակղէս: Սա ասի որդի գոլ Արամազդայ. քանզի Զևս նմանեալ Ամփիտրիոնի շաղաշարի ընդ Աղկմէովնեայ և ծնանի ի նմանէ զՀերակղէս, որ և զմեծագոյն

23—1) B. զաթենս ընդ ծառայութ̄բ լինել. 2) B. զաթենացոցն. 2) B. դելփոս. A. դեղփուս = Δελφούς. (?) 3) A. պատանկով. 4) B. այր. 4) B. հաւանեցանե. 5) B. զպւթիայ. 5) B. լակեդոմնացի. 5) A. լուսանցքում «ըղձութի». 6) A. հրամաէ. 7) B. այսորքիկ. 8) A. լուսանցքում՝ «յանդգնեցան», 8) B. լակեդոմնացիքն. 8) B. յաթենացոցն. 9) B. ակղեմոն. 10) B. աղկեմոնի. 12) B. չորորդ. 12) A. ենթակաեալ. B. ենթակացեալ. 12) B. գոլով. 13) B. արամազդա. 13) B. (և) երբեմն. 14) B. ելլադա. 14) B. չոգան աղաչել զնա նախարարք. 15) A. լիցեցի. 17) B. զելլադա. 18) A. սայ. B. նա. 18) B. զպեղ. [յուն. Πηλεύς.] 18) B. պելևս. 19) B. պեղամոն. 19) A. էակիդանք. 22) B. ենթակաեալ. 22) B. հերակլէս. 23) AB. արամազդա. 23) B. ամփիտրոնի. 24) A. «աղկմեովնեոյ». յետոյ ուղղած «աղկմիովնեա.». B. աղկեմոնելա. 24) B. ծնաւ. 24) B. զհերակլես.

մրցմունսն զայնոսիկ կատարեաց: Այս բազումք եղեն ի Հերակղեայ, որոց առաջինն և կարծրագոյն Հիւղէս էր, յորմէ և լակեդեմոնացւոց թագաւորքն ծնան, ուստի և Հերակղեանք ամենիքեան ասին:

Զ.

Գ. Յաղագս եղջերուահարաց Ովրէոնի և Ակտէոնի: Զ. Արտեմիս ասեն որսոյ և աղեղնաւորութեան վերատեսուչ գոլ: Ասի արդ աստուածս այս և զեղլինսն քաջ հարկանել, մինչ կոչիլ աստուածուհոյն Արտեմիս եղջերուահար: Այլ Ովրիոն և Ակտէոն՝ որսորդք էին և սոքա. իսկ Ակտէոնն շամբւք որսայր, ետես զԱրտեմիս մերկ, և քանզի անմարթ էր զաստուածուհին մերկ տեսանել, մանաւանդ զկուսանսն ի նոցունց՝ բարկացեալ արդ Արտեմիս՝ կատաղեցոյց զշունսն Ակտէոնի, որք գտեալ զնա՝ սպանին. իբրու ասի Ակտէոնն առ ի շանց գիշատիլ: Այլ Ովրիոն ասի ի պատահման աստուածոցն առ մորթով արջառոյն, զոր եգեն Իւրեփս՝ թագաւոր թեբէացւոց առ ի հիւրընկալութիւն աստուածոցն. քանզի յայնժամ էր ծնեալ և լեալ: Այս Ովրիոն եղև սպանանող գազանաց, այլ և տարփեալ Արտեմիդեայ, վասն որոյ բարկացեալ աստուածուհին՝ յարոյց կարիճ ընդդէմ նորա, ուստի ընկալեալ հարուածս՝ մեռաւ, վասն որոյ և յերկինս նկարեալ եղև առ կարճին:

Է.

Է. Յաղագս փոխադրութեան եղջերուին ընդ կուսին. որ է եղեալ յեւթներորդ պատմութեան յարձանականսն ընդդէմ Յուլիանոսի:

Յորժամ յԵլլադայ նաւարկութիւնն եղլենացւոց եղև ի վերայ Տրովադայ առ ի Յովղիդէ բիովտացւոց, զոհ լինելով Արտեմիդեայ, եւ

---

1) B. հերակլեա. 2) հեղես. [յուն. Ὕλλος.]. 2) B. (և) լակեմոնացոց. 3) B. հերակլեանքն. 3) A. ամենքեան. B. ամենիքեան. 5) A. «Ե» կամ «Է». 5) B. եղջուրահարացն. 5) B. էաքտոնի. 6) B. (գոլ)չիք. 7) B. զեղլինս. 7) A. լուսանցքում՝ «արտեմեա». 8) A. եղջեւրուահար. B. եղջեւրահար. 8) B. ովրիոնի. 9) B. աքէոն. 9) A. (և) չիք. 9) A. լուսանցքում՝ «տեղեակ». 10) B. զածուհին. 11) B. կաղացոյց. 11) B. աքտոնէի. 12) B. առ ի շանց գլխատեալ. 13) A. արջառոցն. B. արջառոյն. 13) B. ուրեփս [Hyrieus.]. 14) B. թեբացոց. 15) B. լեեալ. 15) B. սպանող. 16) AB. արտեմիդեա. 17) B. յարոց. 17) B. կարիճս ընդեմ: 17) A. նորայ. 18) B. (և)չիք. 18) B. կարիճն. 20) B. կուսին եղջեւրուին ընդ կուսին. 20) A լուսանց. «եղին». 22) A. լուանցքում «յորժամ»-ից առաջ. «էէ», «ժդ», «գ». 22) B. նաւարկութի ելլենացոցն. 22) AB. վերա. 23) A. տրովադա. B. տրովդա. 23) A. (ի)չիք. 23) B. յովղիտէ. 23) B. բւովտացոց. 23) A. արտեմիդեա.

դստերն Ագամեմնոնի, որում անուն էր Իփիգենիա, ի սպանդ աւանդելով, Արտեմիս ողորմեալ կուսին յափշտակէ զնա և ի բաց տանի առ Տաւրոսս ի Սկւթիա, և երևեցոյց փոխանակ կուսին եղն, զոր առեալ եղլենացիքն զոհեցին. իսկ Իփիգենիա ի Սկիւթս քահանաւհի եղև Արտեմիդեայ:

Ը.

ը. Յաղագս Թեսսաղական այրին: Ծնեալ Աքիւղլէս ի Թետիսէ աւանդեցաւ ի Քիրոն, որով վարժեալ լինէր սնուցանողաւն, համանգամայն և վարդապետաւ, աղեղնաւորութեանն: Եւ էր այս Քիրոն Իպպակենդավրոս, բնակեալ յայրս ինչ քարանձաւացն ի Թետտալիայ: Արդ առեալ Քիրոն զԱքիղլէս և նստուցեալ յետուստ իւր ի վերայ ձիեղէն կողմանն, սնուցանելով զնա ոչ կաթամբ կամ հացիւ, այլ ուղղովք եղջերուաց և այլոց կենդանեաց, վասն որոյ և Աքիւղլէս անուանեցաւ, իբր ոչ հաղորդեալ քիղոսի, քանզի քիղոս սովորական կերակուրս է:

Թ.

թ. Յաղագս բոտրջմանն ոսկենդաննին Գիւգեայ: Զայս պատմութիւն յիշէ յարձանականսն ի յիններորդ պատմագրութեանն: Գղատոնն ի քաղաքավարութիւնսն ասէ թէ Գիւգէս հովիւ էր, և մինչ արածէր զհաւտ իւր եգիտ ձի պղնձի և ի ներքոյ նորին եգիտ մարդ մեռեալ, որ ունէր մատանի: Եւ առեալ զմատանին զայն ունէր, և յորժամ շրջէր զափենդնոնն մատանոյն աներևոյթ լինէր ի մերձակայիցն: Այլ ափենդնոն գլուխն ասի մատանոյն, որ էր շրջշրջուն: Արդ ունելով զմատանին եկն առ թագաւորն զիւղացւոց, և շրջեալ զափենդոնն եղև աներևոյթ և մտեալ սպան

1) B. ագեմեմնի. 1) B. (որում)չէք. 1) B. փիգենիա. 1) B. սպանդելով. 1) B. (աւանդելով)չէք. 2) B. տորոսս. 3) B. սկւթիայ. 3) A. (և) երևեցոյց. 3) A. «եղն». լուսանցքում. «եղջիւրու»: 3) B. ելլենացին. 4) B. իւփիգինեայ. 4) B. սկւթս. 4) A. արտեմիդեա. 6) A. լուսանցքում. «դ». 6) B. աքիլլեւս. 6) B. թետեսէ. 7) A. վարեալ. 7) B. սնուցողաւն. 8) B. վարդապետաւն. 8) Պէտք է լինէր «Իպպոկենդավրոս» = յուն. ἱπποκένταυρος. A. լուսանցքում՝ «կենդավրոս». 9) B. թետալիայ. 10) B. զաքիւղղեւս. 10) AB. վերա. 11) B եղովք. 11) A. եղջիւրուաց. B. եղջիւրուացն. A. լուսանցքում. «առեւծուց». 12) B. քեղոսի. A. լուսանց. «ոչ կերակրեալ քիւղոսիւ». 13) B քեղոս. 15) A. Ե. 15) B. բատշրջման. 15) B. սափենդնոնին. 15) B. գիւգոսի. 16) B. պատմագրութին. 16) B. պղատոն. 17) B. քաղաքավարութն. A. լուս. «ի քաղաքականումն». 17. A. գիւգէոս. A. լուսանցքում. «գիուգես». 17) A. (և)չէք. 17) B. զհաւտս. 18) AB. պղընձի. 18) B. նորա. 20) A. մերձակիցն. 20) B. գլուխ. 21) B. (որ էր)չէք. 22) A. լուսանցքում. «ի թագաւ...ուին». 22) B. զիւղացոց. 22) B զափենդնոն.

զթագաւորն և առ զթագաւորութիւնն։ Բայց Հերոդոտոս այլպէս պատմէ յաղագս Կիւգեսի. որպէս թէ հրամանաւ դշխոյին եսպան զԿանդաւղէս Կիւգէս և թագաւորեաց։

Ժ.

ժ. Յաղագս Մինդասայ։ Մինդասս այս թագաւոր էր փռիւգացւոց և էր արծաթասէր յոյժ և ոսկեմոլ, որպէս և գործք նորա յայտնեն։ Ըղձացաւ արդ սա, զի յոր ինչ և մերձենայցէ ոսկի լինիցի։ Եւ կատարեցան իղձք սորա. եւ յոր ինչ մերձենայր ձեռամբ կամ բերանով՝ ոսկի լինէր։ Եւ այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր, այլ ուտել ոչ կարելով՝ մահուամբ կորուսեալ լինէր, զի տուեալն նմա կերակուր ի ձեռն բերանոյն՝ ոսկիացեալ լինէր, վասն որոյ և ապականեցաւ սովով։ Այլ պատմեն այլք ոմանք, թէ հրաման առեալ՝ եկաց. եւ հրամանն էր այսպիսի ինչ՝ վարել զկառսն, եւ ու՛ր արգելցին կառքն շինել քաղաք։ Եւ արար այնպէս և շինեաց զԱնկիւրա զգաղատացւոց. քանզի խարիսխ երկաթի գետանաւու կառուցեալ ի կառսն՝ առկայացոյց զՄինդաս. եւ այնպէս շինեցաւ քաղաքն և կոչեցաւ Անկիւրա, որ թարգմանի խարիսխ։

ԺԱ.

ժա. Յաղագս Նեղին Աբարիսի. զոր եւ յիշէ Հերոդոտոս ի չորրորդումն։ Աբարիսս այս դերհիւսիսային այր ոմն էր, և են դերհիւսիսայինքն եղղենախոհք և կարծրագոյնք քան զայլ սկիւթացիսն։ Արդ այս Աբարիս ասի թէ փչմամբ ինչ լի եղև, և շրջէր յԵղղադայ շուրջանակի հանդերձ նետիւն, եւ հրամանս ինչ և դիւթութիւնս պատմէր, իբրու յաստուածուստ փչումն ընկալեալ։ Այլ Պիւկուրգոս հռետոր յիշէ զԱբարիս ի ճառին յորում ընդդէմ Մենեսքիոսի, եթէ սով եղեալ ի դերհիւսիսային կողմանս՝ եկն Աբարիս յԵղղադա, և վարձաւոր եղև Ապողոնի, և ուսաւ առ ի նմանէ

1) B. հերովդիտոս. 2) B. գիւգոսի. 2) B. դժխոյին. 2) AB. զկանդուղէս. 5) A. գ̄. 5) A մինդասա. B. մինդասեայ. 5) B. Մինդաս. 5) B. է. 5) B. փռիւգեցոցն. 6) B. վկաեն. 7) B. (արդ) չիք. 7) B. թե. 8) B. ըղձք նորա. A. սորայ. 8) B. (եւ) յոր ինչ. 9) B. (եւ այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր) չիք. 9) A. նմայ. 14) B. գաղատացոց. 14) A. գետայնաւու. B. գետանաւ. 15) B. առկաացոյց. 16) B. անկիւրիա. 18) A. է̄. 18) B. աբարիս. 18) B. զորս. 18) B. (եւ) չիք. 18) B. հերովդիտոն. 19) A. դերհիսւսային. B. դենհւիւսաին. 19) A. դերհիսւսաինքն. B. դենհւսւսաինքն. 19) B. ելլենախոհք. 20) B. կարծրագոյն. 20) B. սկութաինքն. 20) B. սաբարիսս. 20) B. (թէ) չիք. 21) A. լուսանց. «հոգով». 21) B. յելլադա. 21) B. նետիւ. 23) B. լիւկուրգոս. 24) B. ընդեմ. 24) B. մենեքսիոսի. 24) AB. դերհւսւսաին. 24) B. կողմանսն. 24) B. և եկն. 25) B. նաբարիս. 25) B. յելլադա. 25) B. ապողոնի. A. լուսանցքում. «ի դեղփե. ժգ..դեղփք».

զդիւթութիւնն և զհրամանաբանելն, եւ այնպէս ունելով զնետն, իբր նշան ինչ յԱպողոնէ (քանզի աղեղնաւոր է աստուածն այն) շրջէր հրամանաբանելով յԵղղադա:

ԺԲ.

ժբ. Յաղագս Պետրոսի որ ի Հռոմայ յաղագս Ենպեդոկլեայ: Քանզի պատարային քիմռին վերստին բուսանելով, զոր յիշէ աստուածայինս այս Գրիգորիոս յարձանականսն ի յիններորդ պատմութեանն՝ ապականէր զգաւառն լիւկիացւոց. եւ Պռիւտոսի թագաւորելով Լիւկիոյ՝ հրաման առ Ընդեռովփինոս սպանանել զքիմռն: Եւ էր գազանն, որպէս անդանաւր ասացաք, առաջին կողմն որպէս առեւծ և վերջինն վիշապ, և ի մէջ նոցա՝ քիմռ, ուստ հուր թափէր. և էր գազանն դժուարայաղթ: Արդ զձին Պեգասոս յաստուածուստ գտեալ Ընդեռովփինոս, զորմէ ասի թեւս ունել, եւ ի սմբակացն հուր թափէր, եւ մարտակից ունելով զթռիչսն զերիվարին, քանզի որպէս ասացի թեւաւոր էր՝ սպան զքիմռն:

ԺԳ.

ժգ. Յաղագս Աղփէոսի: Աղփիոս գետ է արկադացւոց, եւ Արկադիա քաղաք է Պեղղոփոնիսոյ: Է և աղբիւր ի կղզոջն ի Սիկեղիա որ անուանեալ կոչի Արեթուսա: Եւ գետն այն ասի թէ տռփեցաւ աղբերն Արեթուսայ, եւ տռփեալ եմուտ ընդ խորս ծովուն, եւ վերստին երևեցաւ ի Սիկիլիա առ աղբերն այնմիկ, ոչ խառնեալ ընդ աղի ջուրս ծովուն, այլ մաքուր և յստակ պահելով զջուրն՝ առ տռփեալն եհաս:

Հանդերձ այսուիկ է եւ յաղագս սաղամանդրացն պատմութիւն: Սաղամանդրն կենդանի ինչ է — մեծութեամբ՝ քան զոր կովածուծն կոչեն, եւ կամ որպէս փոքր ցամաքային կոկորդիղոս: Եւ է ցուրտ բնութեամբ կենդանին գերագոյն քան զբան, իբր զի, ի հուր մտանելով նորա՝ շիջանել բոցոյն, և նա ոչ այրի:

---

1) A. զնետս. 1) B. իբրև. 3) B. հրամաբանելով. 3) B. յելլադա. 5) A. լուսանցքում. «խե, ն: ը. ռ,». 5) B. ըերոողովփոնդոսի. 6) A. պատարախն. B. պատարին. [յուն. παταρικός.] 6) վերբստին. 6) AB. ածախնս. 7) B. պատմութե. 7) Տես. III, խէ. 8) B. լիկկիացւոց. 8) B. (եւ) պռիւտոս. 8) B լիկկիոյ. 9) B. ըեղեռովփոնէս. 10) B. ասաց. 10) B. վերջին. 11) B. ուստի. 12) B. ըեղեռոնփենտես. 14) B. զթռիչս. 14) A. զերիւարին. 14) B. և սպան. 16) B. աղփիոս. 16) B. արկգացոց. 16) A. արկադիայ. 17) B. պեղղոպինոսոյ. 17) B. (է) չիք. 17) B. աղբեւր է. 17) B. կղոջն. 17) B. սիկիլա. 18) A. արիթուսա. B. արութուսա. 18) B. (այն)չիք. 19) A. «վեր». լուսանցքում «րստին». 21) A. եւ եւ. 21) A. յըստակ. 22) B. (է)չիք. 22) B. յադագս. 22) B. սաղմանդարացն. 23) B. սաղամադրն. 24) B. (եւ)կամ. 24) A. ցամաքախն. B. ցամաքին. 24) A. կոկոդիղոս. B կոկորդողոս. 26) B. շիջանի բոցն. 26) A. այրել.

Ժ.Դ.

Ժդ. Յաղագս Լիդացի կառացն. որ է առակ վասն կամողացն մաքառել եւ հասանել ոչ կարողաց։ Նախ յառակն այսպէս. ի լիւդացի կառացն սկսանելով, քանզի արագագոյնք են եւ դժուարահասք՝ ասեն, եթէ հետեւակ ընդ լիւդացի կառաց ընթանամք։ Իսկ այլք ասեն թէ վասն Պեղոմպոսի կառացն ասացաւ առակս. զի Պեղոմպոս փռիւգացի էր եւ ոչ լիւդացի. Արդ՝ իւրովք կառաւքն յաղթեաց Իւնոմոսի, եւ յայնմ հետէ ասացաւ առակն՝ ընդ լիւդացի կառացն ընթանալ։

Ժ.Ե.

Ժե. Յաղագս Ովրեստեայ և Պիղադեսի։ Ովրեստէսս այս որդի էր Ագամեմնոնի. այլ սիրելութիւն այնչափ ունէր առ Պիւղադէս, եւ Պիղադէս առ Ովրեստէս, մինչ զի մեռանելով Պիւղադեսի՝ ընդ նմին իջանել Ովրեստեայ ի դժոխս։

Ժ.Զ.

Ժզ. Յաղագս Մողոնիդեանցն։ Մողոն էր կին ոմն բնակեալ առ սահմանաւքն Թրակացւոց։ Սա ունէր որդիս երկուս, առաջնոյն Ովտոս անուն, եւ երկրորդին Եփիաղտէս։ Սորա ըստ ամի աճեցեալք լինէին, ըստ երկայնութեան կանգուն մի, և ըստ լայնութեան թիզ մի. եւ եղեն թշնամանողք և ամբարտաւանք, եւ այնչափ ամբարհաւաճեցին, մինչ զի խորհեցան հակառակել ընդ երկնային աստուածոցն։ Արդ՝ զՈվս ի վերայ Ոթովլի խորհեցան դնել և նոքաւք յերկինս ելանել։ Իսկ են Ովս և Ոթովս երկու լերինք ի սահմանս Թրակացւոց։ Իսկ Զեւս բարկացեալ, որոտմունս հանդերձ փայլատակամբք արձակեալ՝ եկեղ զնոսա, և կորեան։ Այլ յառաջագոյն, յաղագս կիզմանն նոցա, հրամանաբանութիւն տուեալ էր մաւրն, թէ վասն ամբարտաւանութեանն իւրեանց ամպահար լինելոց են։

---

